ՁԵԿՈՒՅՑ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ առողջապահության նախարարություն
«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

ՁԵԿՈՒՅՑ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեղինակներ
Սուրեն Նազինյան
Լուսինե Ներսեսյան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Երևան 2014

ՀՏԴ 614.283:178.8 (042.3)
ԳՄԴ 51.1 (2) 5+87.717.71
Ն 155

Հեղինակներ՝ Նազինյան Ս. Ռ., Ներսեսյան Լ. Ս.

Ն155 Թմրամիջոցների գործածման պատճառների վերաբերյալ ուսումնասիրության զեկույց/

Ս. Ռ. Նազինյան, Լ. Ս. Ներսեսյան.-Եր.: ՀՀ ԱՆ ԱԱԻ, 2014.- 51 էջ:

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված, պետական մարմինների կողմից հաշվառված դատապարտյալների շրջանում նախկինում թմրամիջոցների գործածման պատճառների վերաբերյալ անանուն հարցման միջոցով իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրության յուրօրինակ մեթոդաբանության և հարցման մասնակիցների ճշգրիտ, թիրախային ընտրության շնորհիվ զեկույցում վերհանվել են անօրինական թմրամիջոցների գործածման հիմնական դրդապատճառները, գնահատվել է դրանց տարածվածությունը, ինչպես նաև իրավիճակի և հարցման արդյունքների վերլուծության ու համադրման միջոցով վերհանվել են անօրինական թմրամիջոցների գործածման հիմնական պատճառների և շարժառիթների հետ կապված առանձնահատկությունները Հայաստանում:

Զեկույցն օգտակար տեղեկատվության և վերլուծության աղբյուր կարող է հանդիսանալ ինչպես պետական մարմինների, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների համար:

ՀՏԴ 614.283:178.8 (042.3)
ԳՄԴ 51.1 (2) 5+87.717.71

ISBN 978-9939-1-0116-3

© Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»
ՓԲԸ, 2014

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Խորին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցներին համագործակցության, հարցման պատշաճ կազմակերպման և իրականացման համար:

Երախտիքի խոսք ենք հղում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բուժսպասարկման բաժնի պետ, արդարադատության գնդապետ պարոն Ալեքսանդր Սարկիսովին և բուժսպասարկման բաժնի պետի տեղակալ, արդարադատության գնդապետ պարոն Արա Հովհաննիսյանին արդեն մշտական դարձած արդյունավետ համագործակցության համար:

Մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը և առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն պարոն Ալեքսանդր Բազարչյանին՝ հանրապետությունում իր նախադեպը չունեցող այս հետազոտության իրականացմանը ցուցաբերած աջակցության, անգնահատելի խորհուրդների և առաջարկների, ինչպես նաև ուսումնասիրության վերաբերյալ զեկույցի պատրաստմանն ու հրապարակմանն օժանդակելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 5

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ 6

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ 11

Սոցիալ հոգեբանական դրդապատճառներ 11

Անձնական և անհատական խնդիրների, պահանջների հետևանքով թմրամիջոցների գործածման դրդապատճառներ 17

Թմրամիջոցների գործածման ախտաբանական դրդապատճառներ 22

Ընդհանուր պատկերը և այլ բացահայտումներ 24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 32

Հավելված 1. Հարցաթերթիկ 32

Հավելված 2. Հարցման արդյունքներ 42

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 51

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և գնահատել թմրամիջոցների գործածման պատճառահետևանքային կապերը՝ դրդապատճառները (շարժառիթները) արդյունքում զարգացող հետևանքները թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում: Հաշվի առնելով, որ ազգաբնակչության առավել վտանգի ենթարկվող ա՛յս խմբի շրջանում ուսումնասիրությունների իրականացումը բավականին բարդ է՝ պայմանավորված թմրամիջոցներ գործածող անձանց «թաքնված» լինելու հանգամանքով՝ ուսումնասիրությունն իրականացվել է արդեն իսկ պետական մարմինների տեսադաշտում գտնվող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված պետական մարմինների կողմից պաշտոնապես հաշվառված թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում: Արդեն իսկ թմրամիջոցներ գործածելու փորձ ունեցող անձանց կողմից թմրամիջոցներ գործածելու պատճառների և շարժառիթների (դրդապատճառների, մոտիվների) վերաբերյալ հավաքագրված տեղեկություններն ու տվյալները լավագույն կերպով ներկայացնում են թմրամիջոցների գործածման պատճառների մասին օբյեկտիվ պատկերը մեր հանրապետությունում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսումնասիրության իրականացման նպատակով, առաջնորդվելով թմրամիջոցների գործածման դրդապատճառների (շարժառիթների, մոտիվների) ուսումնասիրության Ի. Վ. Աքսյուչիցի կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ և ձևաչափով («Методика изучения мотивов употребления наркотиков», И.В. Аксючиц), ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության թմրամիջոցների և թմրամոլության դիտակայանի կողմից թարգմանվել, հայաստանյան պայմաններին համապատասխանեցվել (ադապտացվել), ապա պատրաստվել է հարցաթերթիկ:

Հարցմանը կամավոր մասնակցել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն յոթ հիմնարկներում թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված հաշվառված թվով 157 դատապարտյալներ:

Հարցաթերթիկը բաղկացած է եղել ընդհանուր 45 պնդումներից (հարցերից): Պնդումները եղել են նախօրոք կոդավորված, այսինք՝ յուրաքանչյուր պնդում ունեցել է իր պատասխանների 5 տարբերակները՝ «Այո», «Ավելի շուտ, այո», «Չգիտեմ», «Ավելի շուտ, ոչ» և «Ոչ», որոնցից հարցվողն ընտրել է միայն մեկ տարբերակ: Պնդումների բովանդակությունը եղել է հասկանալի, հստակ և մատչելի (առանց մասնագիտական եզրույթների կիրառման), քանի որ հարցման ընթացքում հարցման մասնակիցները պետք է հարցաթերթիկը լրացնեին ինքնուրույն՝ առանց կողմնակի միջամտության կամ օժանդակության. յուրաքանչյուր օգնություն, պարզաբանում կամ միջամտություն կարող էր հանգեցնել անճշտության և ուսումնասիրության իրական արդյունքների աղավաղման:

Հարցաթերթիկը եղել է անանուն: Չի եղել որևէ համար, թվանշան կամ անվանում, որի միջոցով կարելի լիներ բացահայտել կամ նույնականացնել (իդենտիֆիկացնել) լրացնողին: Հարցվողների վստահությանն արժանանալու համար հարցաթերթիկերը բաժանվել

են միանման, միագույն և փակ (սակայն՝ չսոսնձված) ծրարներով: Հարցման մասնակիցները ուսումնասիրությանը մասնակցել են կամավոր՝ առանց որևէ հարկադրանքի: Հարցման իրականացման ընթացքում յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում ներկա է եղել հարցման պատասխանատուն (պատասխանատուները): Հարցումն ավարտելուց հետո հարցմանը մասնակիցներին պատասխանատուի (պատասխանատուների) կողմից առաջարկվել է արդեն իսկ լրացված հարցաթերթիկերն ինքնուրույն տեղավորել ծրարների մեջ և սոսնձելու միջոցով փակել ծրարները: Հարցման ավարտից անմիջապես հետո հարցման պատասխանատու անձի կամ տվյալ հիմնարկի ադմինիստրացիան ներկայացնող անձի կողմից սոսնձված ծրարները փոխանցվել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բուժսպասարկման բաժին, որտեղից էլ՝ սոսնձված ծրարները փոխանցվել են ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ թմրամիջոցների և թմրամոլության դիտակայան՝ հարցման արդյունքները հավաքագրելու, վերլուծելու և հետագայում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ներկայացնելու նպատակով:

ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ թմրամիջոցների և թմրամոլության դիտակայանի կողմից ստեղծվել է համապատասխան անվտանգ էլեկտրոնային բազա («Microsoft Excel-2010»), որտեղ մուտքագրվել են լրացված հարցաթերթիկերում արտացոլված տվյալները, որից հետո կատարվել է մանրամասն վերլուծություն:

Համաձայն ուսումնասիրության մեթոդաբանության՝ թմրամիջոցների գործածման պատճառները պայմանականորեն բաժանված են երեք խմբի.

- **սոցիալ-հոգեբանական դրդապատճառների խումբ,**

- **անձնական և անհատական խնդիրների, պահանջների հետևանքով թմրամիջոցների գործածման դրդապատճառների խումբ,**
- **ախտաբանական դրդապատճառների խումբ**:

Պատճառների յուրաքանչյուր խումբ իր հերթին պայմանականորեն կազմված է դրդապատճառների երեքական ենթախմբերից: Դրանք ներկայացված են ստորև:

Դրդապատճառների առաջին եռյակը (ենթախմբերը) վերաբերվում է թմրամիջոցների օգտագործման **սոցիալ-հոգեբանական դրդապատճառների** խմբին:

1. Թմրամիջոցների օգտագործման ավանդույթային դրդապատճառները վկայում են տոնական օրերին և այլ ավանդույթային պատճառներով թմրամիջոցներ ընդունելու ցանկությունների, պահանջների մասին (պնդումներ 1, 10, 19, 28, 37).
2. Թմրամիջոցների օգտագործման սուբմիսիվ[1] դրդապատճառներն արտացոլում են «նշանակալի» մարդկանց կամ ռեֆերենտ խմբերի կողմից ճնշման ենթարկման կամ նրանց «նմանվելու» ցանկության փաստը (պնդումներ 2, 11, 20, 29, 38).
3. «Կեղծ-մշակույթային» դրդապատճառները վկայում են հիմնականում երիտասարդական որոշ ենթամշակույթների ներկայացուցիչների կողմից դավանած «թմրամոլային» արժեհամակարգերին և վարքային դրսևորումներին համապատասխանելու, «նմանվելու» ցանկության մասին (պնդումներ 3, 12, 21, 30, 39):

Դրդապատճառների երկրորդ եռյակը վերաբերվում է զուտ **անձնական և անհատական խնդիրների, պահանջների հետևանքով թմրամիջոցների գործածման դրդապատճառների** խմբին:

[1] «Սուբմիսիվ» նշանակում է հարկադիր, պարտադրված, ենթարկվող:

4. Հաճույքապաշտական (հեդոնիստական) պատճառներն արտացոլում են թմրամիջոցի ազդեցությունից ֆիզիոլոգիական և հոգեկան հաճելի զգացողություններ ունենալու, ինչպես նաև թմրամիջոցի գործածումից առաջացած էյֆորիան զգալու ձգտումը (պնդումներ 4, 13, 22, 31, 40).
5. Ատարակտիկ[2] պատճառներն արտացոլում են թմրամիջոցների գործածման միջոցով բացասական հուզական ապրումները՝ վախը, տագնապը, լարվածությունը, դիսկոմֆորտը, մեղմելու, չեզոքացնելու (բացառելու) ցանկությունը (պնդումներ 5, 14, 23, 32, 41).
6. Վարքային դրսևորումները գերակտիվացնելու պատճառները վկայում են թմրամիջոցների գործածման միջոցով ձանձրույթի վիճակից, հոգեկան անգործությունից «դուրս գալ» ցանկանալու, դրանցից խուսափելու կամ սեփական վարքագծի ակտիվությունը բարձրացնելու ձգտման մասին (պնդումներ 6, 15, 24, 33, 42):

Երրորդ եռյակը վերաբերվում է թմրամիջոցների գործածման **ախտաբանական պատճառներին**, որոնք վկայում են թմրամիջոցների նկատմամբ հիվանդագին հակման արդեն իսկ գիտակցված լինելու մասին:

7. Զրկանքի [3] (ժուժկալման, աբստինենտային) դրդապատճառներն արտահայտում են թմրամիջոցի գործածման միջոցով զրկանքի վիճակը, դրա պատճառով առաջացած դիսկոմֆորտը, ինչպես նաև զրկանքի

[2] «Ատարաքսիա» նշանակում է հանգստություն, անխռով, սառնասրտություն:

[3] Զրկանքի (ժուժկալման, աբստինենտային) համախտանիշը հոգեկան և/կամ մարմնական ախտանիշների համակցություն է, որը զարգանում է թմրամիջոցներից կամ այլ հոգեներգործուն նյութերից կախվածությամբ տառապող անձանց մոտ թմրամիջոցի գործածումը դադարեցնելու կամ գործածվող օրական չափաբաժնի նվազեցման հետևանքով: Հանրության որոշ շրջանակներում գործածվում են զրկանքի համախտանիշի տարածված ոչ գրական անվանումները՝ «պախմելիա» (ալկոհոլից կախվածության դեպքում) և «լոմկա» (ափիոնատիպ նյութերից կախվածության դեպքում): Կախվածության համախտանիշ առաջացնող թմրամիջոցների կամ այլ հոգեներգործուն նյութերի յուրաքանչյուր դասի դեպքում զարգացող զրկանքի համախտանիշները միմյանցից տարբեր են՝ տարբեր ախտանիշների և խանգարումների դրսևորումներով:

ախտանիշները մեղմելու, հաղթահարելու (վերացնելու) և ինքնազգացողությունը լավացնելու ձգտումը (պնդումներ 7, 16, 25, 34, 43).

8. Կախվածությամբ պայմանավորված դրդապատճառները վկայում են թմրամիջոցի նկատմամբ հիվանդագին հակման փաստի և այդ պատճառով թմրամիջոցի հերթական չափաբաժինն անպայմանորեն ընդունելու պահանջը գիտակցելու մասին (պնդումներ 8, 17, 26, 35, 44).
9. Ինքնավնասման դրդապատճառներն արտացոլում են թմրամիջոցների օգտագործումը՝ որպես բողոքի դրսևորում (հակառակ հարազատների և նրանց նկատմամբ ցուցադրական վարքի դրսևորմամբ) կամ դիտավորյալ ինքնավնասման, սեփական առողջությանը վնաս հասցնելու նպատակով, ինչը սովորաբար պայմանավորված է լինում ապագայի հեռանկարի, նպատակների բացակայությամբ և սթափ կյանք վարելու իմաստի կորստով (պնդումներ 9, 18, 27, 36, 45):

Հարցումն իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության յոթ հիմնարկներում՝ «Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Սևան», «Էրեբունի», «Հրազդան», «Արթիկ» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում գտնվող, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված, հաշվառված թվով 157 դատապարտյալների շրջանում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սոցիալ-հոգեբանական դրդապատճառներ

Ավանդույթային դրդապատճառներ

Դրամական միջոցների անհրաժեշտության մասին պնդման պատասխաններից բացահայտվում է, որ թմրամիջոցներ գործածելու համար դրամական միջոցների առկայությունը հարցման մասնակիցների գրեթե կեսի համար պարտադիր պայման չէ: Կարելի է ենթադրել, որ թմրամիջոցներ հայթայթելու, ապա և գործածելու համար պարտադիր չէ ունենալ մեծ դրամական հնարավորություններ (*գծապատկեր 1*):

Գծապատկեր 1. Դրամական միջոցների անհրաժեշտության մասին պնդման (հարցի) վերաբերյալ արդյունքների գրաֆիկական պատկերը:



Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ թմրամիջոցներ գործածող անձանց կողմից թմրամիջոցների գործածման միջոցով շրջապատի անձանց կողմից որպես «հեղինակություն» և ընդհանուր զանգվածից «տարբերվող» ընկալվելը հիմնական ու տարածված դրդապատճառներից չի հանդիսանում: Այնուամենայնիվ, հետաքրքրական է, որ հարցման յուրաքանչյուր տասը մասնակիցներից գրեթե ինը (88,39 տոկոս) պնդում են, որ թմրամիջոցների գործածումը մարդուն չեն դարձնում «հեղինակություն» և մարդկանց մնացյալ հատվածից «տարբերվող»

(6,45 տոկոսը համաձայն են այս պնդման հետ): Բայց, միևնույն ժամանակ, հարցման մասնակիցների միայն 2/3-ն (65,58 տոկոսը) է համաձայն այն պնդման հետ, որ թմրամիջոցների՝ քիչ թվով անձանց հասանելի լինելու պատճառով, թմրամիջոց գործածող անձը շրջապատի կողմից որպես «հեղինակություն» չի ընկալվում: Հարցման մասնակիցների 1/3-ը (32,47 տոկոս) պնդում են, որ թմրամիջոց գործածողը շրջապատի կողմից ընկալվում է որպես «հեղինակություն»:

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ թմրամիջոցներից զերծ կենսակերպ վարող անձանց որոշ խմբերի կարծիքով թմրամիջոցներ հայթայթելն ու գործածելը «հեղինակություն» ունեցող անձին հասանելի գործողություն է, ի տարբերություն արդեն թմրամիջոցներ գործածող անձանց կարծիքի (ընդամենը 6,45 տոկոսն է պնդում, որ թմրամիջոցներ գործածողները դառնում են «հեղինակություն»): Այս փաստը վկայում է, որ բնակչության որոշ խմբեր, թմրամիջոցների վնասակար ու կործանարար ազդեցությունների և թմրամիջոցների անօրինական շրջանառության վերաբերյալ բավարար իրազեկվածություն չունենալով, կարող են ձգտում և ցանկություն ունենալ վարել «միայն հեղինակություն հանդիսացող անձանց» հատկանշական կենսակերպ ու միա՛յն թմրամիջոց գործածելու փորձ կատարելուց հետո գիտակցել, որ թմրամիջոցների գործածումը մարդուն «հեղինակություն» չեն դարձնում:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ըստ հարցման արդյունքների՝ հանրապետության բնակչության շրջանում, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, սովորույթներով և ավանդույթներով պայմանավորված թմրամիջոցների գործածման դրսևորումներն արմատավորված չեն: Այսպես, ասիական մի շարք երկրների՝ Աֆղանստանի, Իրանի, Պակիստանի («Ոսկե կիսալուսին»[4]),

[4] Աֆղանստանը, Պակիստանը և ԻԻՀ-ն ներառող տարածք Ասիա մայրցամաքում, որտեղ հատուկ ցանքատարածություններում աճեցվում, մշակվում է ափիոնային թմրամիջոցների հումք հանդիսացող քնաբեր կակաչ (Papaver somniferum, խաշխաշ) բույսը և ապօրինի արտադրամասերում արտադրվում ափիոնային թմրամիջոցներ (այդ թվում՝ հերոին): Այս տարածաշրջանը (գլխավորապես՝ Աֆղանստանը) համարվում է աշխարհում ապօրինի ափիոնային թմրամիջոցների գլխավոր մատակարարը:

հարավ-արևելյան Ասիայի երկրների (Հնդկաչին թերակղզու երկրներ, «Ոսկե եռանկյունի»[5]) որոշ տարածքների բնակիչների կողմից ծխելու կամ խմելու միջոցով ափիոնի[6] գործածումը և հարավամերիկյան մի շարք երկրների՝ Վենեսուելայի, Էկվադորի, Կոլումբիայի որոշ տարածքներում ապրող բնակիչների կողմից ծամելու միջոցով կոկա բույսի[7] տերևների գործածումն ավանդույթային կամ սովորույթային բնույթ է կրում, և արդյունքում նշված երկրներում հիմնականում թմրամիջոցի առաջին անգամ գործածման և հետագայում մշտական գործածման պատճառ է հանդիսանում դարերի ընթացքում ձևավորված տեղական ավանդույթներով և սովորույթներով առաջնորդվելու պատճառով, ինչպես նաև ծիսակարգային արարողությունների ընթացքում թմրամիջոցներ պարունակող բույսերի «պարտադիր» գործածումը: Ի տարբերություն վերոնշյալ երկրների, մեր հանրապետությունում հարաբերականորեն ավանդույթային կարելի է համարել ոչ թե թմրամիջոցների, այլ ալկոհոլային խմիչքների գործածումը, հատկապես՝ տոնական, հանգստյան և սգո օրերին:

---

[5] Լաոսի, Թայլանդի և Մյանմայի լեռնային շրջաններն ընդգրկող աշխարհագրական տարածք, որտեղ հատուկ ցանքատարածություններում աճեցվում, մշակվում է ափիոնային թմրամիջոցների հումք հանդիսացող քնաբեր կակաչ: Աշխարհին ափիոնատիպ թմրամիջոցներ մատակարարող աշխարհագրական գլխավոր տարածքներից մեկն է՝ զիջելով ափիոնատիպ նյութերի արտադրության քանակով միայն «Ոսկե կիսալուսնի» երկրներին:

[6] Քնաբեր կակաչից (Papaver somniferum, խաշխաշ) ստացվող մորֆինի պարունակությամբ թմրամիջոց, որն օգտագործվում է տարբեր եղանակներով: Ափիոնիոնատիպ նյութերը կամ օփիոիդային թմրամիջոցները քնաբեր կակաչից ստացվող և արհեստական ճանապարհով սինթեզվող թմրամիջոցների խումբ (դաս) է, որոնք հանդիսանում են օրգանիզմի օփիոիդային (էնդորֆինային) ընկալիչների ներհակորդներ (ագոնիստներ): Հայաստանում օգտագործվում են հիմնականում ներերակային ներարկման եղանակով: Այս խմբին են դասվում ափիոնը, ացետիլացված ափիոնը (ոչ գրական անվանումը՝ «չերնյաշկա»), հերոինը, մորֆինը, կոդեինը, մեթադոնը, բուպրենորֆինը, դեղոմորֆինը և այլ թմրամիջոցներ:

[7] Erythroxylum coca (լատ.) – Գլխավորապես Հարավային Ամերիկայում աճող բույս: Կոկա բույսի տերևների հատուկ մշակման արդյունքում է պատրաստվում կոկաինը:

Սուբմիսիվ դրդապատճառներ

Այս ենթախմբի պնդումների վերաբերյալ պատասխաններից կարելի է եզրակացնել, որ թմրամիջոցներ գործածելու սուբմիսիվ դրդապատճառները՝ «նշանակալի» մարդկանց կամ ռեֆերենտ խմբերի կողմից ճնշման ենթարկման արդյունքում կամ նրանց «նմանվելու» ցանկությամբ պայմանավորված դրդապատճառները, նույնպես ամենատարածվածը չեն մեր բնակչության շրջանում: Այսպես, հարցման մասնակիցների միայն 18,18 տոկոսն է պնդում, որ թմրամիջոցներ գործածելու դրդապատճառն ընկերական խմբերի ճնշումն ու ազդեցությունն է: Հարցման յուրաքանչյուր տասը մասնակցից մոտավորապես ութի կարծիքով՝ «նշանակալի» մարդկանց կամ ռեֆերենտ խմբերի կողմից ճնշումները կամ նրանց նմանվելու ցանկությունը թմրամիջոցների գործածման դրդապատճառ չեն հանդիսանում: Իսկ հարցման յուրաքանչյուր երեք մասնակիցներից մեկի (33,97 տոկոս) կարծիքով՝ թմրամիջոցներ գործածելու դրդապատճառ է հանդիսանում թմրամիջոց գործածելու փորձ ունեցող անձանց ապրումներն ու զգացողությունները հասկանալի դարձնելու մղումը: Արդյունքների մանրամասն վերլուծությունից պարզ է դառնում, որ սուբմիսիվ դրդապատճառների ենթախմբից թմրամիջոցների գործածումը՝ պայմանավորված «պարտադրվող» կամ «ստիպողական» (այլոց կողմից «ճնշվելու», «համոզվելու» արդյունքում կամ այլոց «նմանվելու», ընկերներից չտարբերվելու նկատառումներով) դրդապատճառներով, իր տարածվածությամբ զիջում է թմրամիջոցներ գործածող անձանց զգացողություններն ու ապրումները հասկանալու և հետաքրքրությունը բավարարելու շարժառիթներով թմրամիջոցների գործածման տարածվածությանը:

Այս համատեքստում հարկ է առանձնահատուկ նշել, որ հայաստանյան իրականությունում երբեմն դեպքեր են լինում, երբ արդեն իսկ թմրամիջոցներ գործածելու մեծ փորձ և թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց կողմից քարոզվում և գովաբանվում են թմրամիջոցները թմրամիջոցներից զերծ կենսակերպ վարող անձանց շրջանում՝ վերջինների մոտ թմրամիջոցների ազդեցությամբ

պայմանավորված զգացողությունների նկատմամբ դիտավորյալ հետաքրքրություն և թմրամիջոցների գործածելու ցանկություն առաջացնելու նպատակով, այսպիսով հետագայում «ձեռք բերելով» նոր «թմրամոլ-ընկեր» կամ «գնորդ»: Առավել հաճախ նման մանիպուլյացիայի թիրախ են դառնում նյութական առավել մեծ հնարավորություններ ունեցող, անփորձ և թմրամիջոցների վնասակարության վերաբերյալ բավարար չափով գիտելիք և իրազեկվածություն չունեցող երիտասարդները:

«Կեղծ-մշակութային» դրդապատճառներ

Թմրամիջոցների գործածման «կեղծ-մշակութային» դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխաններից պարզ է դառնում, որ մեր հանրապետությունում, ի տարբերություն այլ երկրների և հասարակությունների, որոշ ենթամշակույթների կողմից քարոզվող, ինչպես նաև ենթամշակույթների հետևորդներին «պարտադրվող» «թմրամոլային» կենսակերպը, վարքն ու արժեհամակարգերը թմրամիջոցներ գործածելու տարածված պատճառ չեն հանդիսանում: Այսպես, հարցման մասնակիցների միայն 15,58 տոկոսն է կարծում, որ թմրամիջոցների գործածումը «ժամանակակից» երևալու միջոց է: Միևնույն ժամանակ, հարցման մասնակիցների գերակշիռ մասը (81,53 տոկոս) համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցներ գործածելը յուրաքանչյուր անհատի անձնական խնդիրն է: Այս փաստն արտացոլվում է հարցման մասնակիցների հիմնական մասի այն տեսակետով, որ անձանց որևէ խմբի կողմից (այդ թվում՝ ենթամշակույթների կողմից) «թմրամոլային» արժեհամակարգերը և թմրամիջոցների գործածմամբ դրսևորվող կենսակերպն ու վարքային «կանոնները» չպետք է քարոզվեն կամ պարտադրվեն ենթամշակույթների հետևորդներին ու երկրպագուներին: Նաև, հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ թմրամիջոցներ գործածող անձանց գերակշիռ մասը (78,85 տոկոս) գիտակցում են թմրամիջոցների գործածման կործանարար (վնասակար) հետևանքները և քննադատաբար են վերաբերվում թմրամիջոցների գործածման հետևանքով առաջացող առողջական ու

սոցիալական բացասական հետևանքներին՝ ավելի վնասակար և վտանգավոր համարելով թմրամիջոցներն ալկոհոլի և ծխախոտի համեմատությամբ:

Թմրամիջոցների գործածման վնասակարության և վտանգավոր հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մասին է խոսում նաև այն, որ հարցման մասնակիցների 61,75 տոկոսի կարծիքով թմրամիջոցների գործածումը կարող է առաջացնել կախվածություն («թմրամոլություն»):

Անձնական և անհատական խնդիրների, պահանջների հետևանքով թմրամիջոցների գործածման դրդապատճառներ

Հաճույքապաշտական (հեդոնիստական) դրդապատճառներ

Ինչպես պարզ է դառնում հարցման արդյունքներից, թմրամիջոցներ գործածելու հաճույքապաշտական (հեդոնիստական) դրդապատճառները բավականին տարածված են, ինչից կարելի է ենթադրել, որ մեր հանրապետությունում թմրամիջոցներ գործածելու հիմնական շարժառիթներից է հանդիսանում թմրամիջոցների գործածման միջոցով հաճելի զգացողություններ առաջացնելու մղումը: Այս փաստն արտացոլվում է հարցման մասնակիցների հիմնական մասի (71,34 տոկոս) այն պնդմամբ, որ թմրամիջոցներն առաջացնում են հոգեկան և ֆիզիոլոգիական հաճույք՝ էյֆորիա, «հաճելի» ու «երանելի» զգացողություններ և ապրումներ: Հարցման յուրաքանչյուր հինգ մասնակցից մեկի (19,11 տոկոս) այդ պնդման հետ անհամաձայնությունն ամենայն հավանականությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցման մասնակիցներն արդեն իսկ ունեն թմրամիջոցների գործածման փորձ (բնականաբար, նրանց մի մասը՝ կախվածություն թմրամիջոցներից), իսկ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց մոտ թմրամիջոցների մշտական (ամենօրյա) գործածման գլխավոր պատճառ է հանդիսանում ոչ թե գործածման արդյունքում «հաճելի» և «երանելի» զգացողություններ առաջացնելը, այլ, առաջին հերթին, զրկանքի (աբստինենտային, ժուժկալման) համախտանիշի մեղմումը կամ «հաղթահարումը» (ախտանիշների վերացումը) թմրամիջոցի հերթական չափաբաժնի գործածման միջոցով և թմրամիջոցի հերթական չափաբաժինը գործածելու «անհաղթահարելի» հիվանդագին պահանջի (ցանկության) բավարարումը:

Հատկանշական է նաև, որ հարցման մասնակիցների 70,78 տոկոսը պնդում են, որ թմրամիջոցի առաջին անգամ գործածումը պատճառ է դառնում այն մշտապես գործածելու համար (20,13 տոկոսը չի համաձայնվել այս պնդման հետ):

Հետաքրքրական է, որ հարցման մասնակիցների կեսից ավելին (50,32 տոկոսը) համաձայն չեն այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումը նպաստում է «հաճելի» և «ուրախ» ժամանցին, ժամանցի ընթացքում մարդկանց հետ ազատորեն շփմանն ու փոխհարաբերվելուն: Այս պնդման հետ համաձայնվել են հարցման մասնակիցների կեսից փոքր-ինչ պակաս մասը (46,45 տոկոս): «Հաճելի» և «ուրախ» ժամանցին նպաստելու վերաբերյալ պնդման նկատմամբ գրեթե հավասարաչափ տարամիտված և միմյանց հակասող կարծիքների առկայությունը հավանաբար պայմանավորված է հարցման մասնակիցների տարբեր տարիքային խմբերին պատկանելիությամբ, մասամբ նաև տարբեր տեսակի թմրամիջոցներ գործածելու փաստով և «ժամանցի» մասին տարբերվող տեսակետներով: Հարկ է նշել, որ, ի տարբերություն բազմաթիվ երկրների, այսպես կոչված, «ակումբային թմրամիջոցները», որոնք հիմնականում գործածվում են «ակումբային» կենսակերպ վարող երիտասարդների կողմից ժամանցի ընթացքում՝ հիմնականում վարքային դրսևորումները «խթանելու» և «ակտիվացնելու» նպատակով ու ներկայացնում են գերազանցապես խթանիչների ու ցնորածին հոգեներգործուն նյութերի դասերը[8] (խմբերը) (կոկաին[9], ամֆետամին[10], մետաֆետամին[11], լիզերգինաթթվի դիէթիլամիդ[12] («LSD»), էքստազի[13]), մեր հանրապետությունում մեծ

[8] Հետևյալ ախտորոշումներն ըստ ՀՄԴ-10-ի՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ կոկաինի գործածման հետևանքով» (F14), «Հոգեկան և վարքային խանգարումներ այլ խթանիչների (ներառյալ կոֆեինը) գործածման հետևանքով» (F15) և «Հոգեկան և վարքային խանգարումներ ցնորածին նյութերի գործածման հետևանքով» (F16):

[9] Գերազանցապես Հարավային Ամերիկայի արևադարձային գոտիներում աճող Erythroxylum coca, Erythroxylum laetevirens, Erythroxylum novogranatense, Erythroxylum recurrens, Erythroxylum steyermarkii (լատ.) բույսերից հատուկ մշակման արդյունքում ստացվող տեղային անզգայացում առաջացնող և հոգեխթանիչ ազդեցությամբ թմրամիջոց: Գործածվում է հիմնականում քթով ներշնչելու, հաճախ նաև՝ ներերակային ներարկման եղանակներով:

[10] Ֆենիլէթիլամինի ածանցյալ հանդիսացող հոգեխթանիչ ազդեցությամբ թմրամիջոց: Սինթեզվում է և գործածվում է հիմնականում հաբերով:

[11] Ֆենիլէթիլամինների խմբին պատկանող ամֆետամինի ածանցյալ հանդիսացող և ամֆետամինից արագահաս կախվածություն առաջացնելու հատկությամբ օժտված, հոգեխթանիչ ազդեցությամբ թմրամիջոց: Սինթեզվում և գործածվում է հիմնականում հաբերով:

[12] Փսիխոդելիկ և ցնորածին ազդեցությամբ կիսաարհեստական թմրամիջոց: Գործածվում է ներքին ընդունման եղանակով:

տարածվածություն չունեն: Հայաստանում առավելապես տարածված է գերազանցապես «սեդատիվ» («հանգստացնող») ազդեցությամբ հոգներգործուն նյութերի (ափիոնատիպ նյութեր[14], կաննաբինոիդներ[15], ինչպես նաև սեդատիվ և քնաբեր դեղեր, մասնավորապես՝ տագնապամարիչներ, ոչ հաճախ նաև նեյրոլեպտիկներ) [16] գործածումը, ինչը չի ենթադրում «ակտիվ ժամանց», «խթանում» և «ակտիվացում»: Մեր հանրապետությունում «ակտիվ երիտասարդական ժամանցի» ընթացքում սովորաբար գործածվում են ալկոհոլային խմիչքներ:

Ատարակտիկ դրդապատճառներ

Թմրամիջոցներ գործածելու տարածված դրդապատճառներից են նաև ատարակտիկ շարժառիթները՝ տարբեր պատճառներից առաջացող բացասական հույզերն ու ապրումները մեղմելու կամ բացառելու նպատակով թմրամիջոցների գործածումը: Ընդ որում՝ հարցման մասնակիցների կեսից ավելին համաձայնվել են, որ թմրամիջոցների գործածումը վերացնում կամ մեղմում է «ընդհանուր» («լայն») բնույթի բացասական հույզերն ու ապրումները՝ տագնապը, վախը, անհանգստությունն ու ներքին լարվածությունը (53,5 տոկոս), ինչպես նաև հնարավորություն է տալիս «կտրվել» իրականությունից և

---

[13] Ֆենիլէթիլամինների խմբին պատկանող ուժգին հոգեխթանիչ ազդեցությամբ կիսաարհեստական թմրամիջոց: Սինթեզվում և գործածվում է հիմնականում հաբերով:

[14] Օփիոիդային թմրամիջոցներ: Քնաբեր կակաչից (Papaver somniferum, խաշխաշ) ստացվող և արհեստական ճանապարհով սինթեզվող թմրամիջոցների խումբ, որոնք հանդիսանում են օրգանիզմի օփիոիդային ընկալիչների ներհակորդներ (ագոնիստներ): Հայաստանում օգտագործվում են հիմնականում ներերակային ներարկման եղանակով: Այս խմբին են դասվում հերոինը, մորֆինը, կոդեինը, մեթադոնը, բուպրենորֆինը, դեղոմորֆինը և այլ թմրամիջոցներ: Ափիոնատիպ նյութերն իրենց տարածվածությամբ Հայաստանում երկրորդ տեղում են՝ զիջելով միայն կաննաբինոիդների օգտագործման տարածվածությանը:

[15] Կաննաբինոիդների առավել մեծ քանակներ պարունակող կանեփի տեսակներից՝ հիմնականում Cannabis sativa և Cannabis indica բույսերից, պատրաստվող թմրամիջոցների խումբ: Այս խմբին են պատկանում մարիխուանան («պլան», «քոլ»,, «անաշա»), հաշիշը, հաշիշի յուղը: Կաննաբինոիդները հիմնականում օգտագործում են ծխելու միջոցով: Կաննաբինոիդների խմբի թմրամիջոցները Հայաստանում իրենց տարածվածությամբ առաջին տեղում են:

[16] Հետևյալ ախտորոշումներն ըստ ՀՄԴ-10-ի՝ Հոգեկան և վարքային խանգարումներ ափիոնատիպ նյութերի գործածման հետևանքով» (F11), «Հոգեկան և վարքային խանգարումներ կաննաբինոիդների խմբի թմրամիջոցների գործածման հետևանքով» (F12) և «Հոգեկան և վարքային խանգարումներ քնաբերների գործածման հետևանքով» (F13):

առօրյա հոգսերից (56,49 տոկոս) և վերացնում է բացասական հուզական ապրումները՝ պայմանավորված դրամական միջոցների պակասի և այլ անձանց հետ փոխհարաբերություններում առկա խնդիրներով (61,69 տոկոս): Սակայն, հետաքրքրական է, որ հարցման մասնակիցների մեծամասնության (65,13 տոկոս) պնդմամբ՝ թմրամիջոցների գործածումը թույլ չի տալիս մոռանալ ընտանիքի անդամների, մտերիմների և հարազատների հետ կոնֆլիկտների կամ տհաճ իրադարձությունների հետևանքով առաջացած տխրությունն ու հիասթափությունները: Նաև, հարցման յուրաքանչյուր տասը մասնակցից գրեթե յոթը (69,06 տոկոս) պնդում են, որ անձնական կյանքի կարգավորման հնարավորությունների բացակայությունը թմրամիջոցների գործածման պատճառ չի հանդիսանում:

Ատարակտիկ դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխանները վերլուծելով՝ ևս մեկ անգամ ապացուցվում է, որ անձի մոտ բացասական ապրումներ առաջացնող գործոններն ու իրավիճակները նպաստում են թմրամիջոցների գործածմանը: Սակայն, դրանք առավելապես վերաբերվում են «ընդհանուր» («լայն») բնույթի (դրամական միջոցների պակաս, տարբեր պատճառներով առաջացող տագնապ, վախ, լարվածություն և անհանգստություն) բացասական հույզերին, ապրումներին և ավելի պակաս չափով՝ ներընտանեկան, մտերիմների և հարազատների հետ «նեղ» փոխհարաբերություններում առկա խնդիրների ու կոնֆլիկտների հետևանքով առաջացող բացասական հույզերին և ապրումներին:

Վարքային դրսևորումների գերակտիվացմանն ուղղված դրդապատճառներ

Վարքային դրսևորումների գերակտիվացմանն ուղղված դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխաններից պարզ է դառնում, որ այս խմբի դրդապատճառները նույնպես տարածվածներից են և հանդիսանում են թմրամիջոցներ գործածելու հիմնական պատճառներից: Հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ թմրամիջոցների գործածումն «ուժ» և «էներգիա» է հաղորդում, «բարձրացնում» աշխատունակությունը, ծառայում որպես

«խթանիչ» միջոց («դոպինգ») (72,9 տոկոս), ինչպես նաև մարդուն թույլ է տալիս զգալ իրեն «ուժեղ» և «ազատ» (54,55 տոկոս):

Հարցման արդյունքների այս պատկերն ամենայն հավանականությամբ պայմանավորված է հարցման մասնակիցների կողմից նախկինում թմրամիջոցներ գործածելու փորձով և նրանց մի մասի մոտ թմրամիջոցներից կախվածության առկայության փաստով: Գաղտնիք չէ, որ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց մոտ թմրամիջոց գործածելու ակտիվ փուլում՝ զրկանքի համախտանիշի, ինչպես նաև թմրամիջոցի նկատմամբ հիվանդագին հակման պատճառով թմրամիջոց գործածելու «անհաղթահարելի» պահանջի պայմաններում զարգանում են հոգեկան և ֆիզիոլոգիական ախտանիշներ, ինչը բնականաբար առաջացնում է անաշխատունակություն կամ աշխատունակության նվազում, «անուժություն», ինչպես նաև տրամադրության ընդհանուր ֆոնի իջեցում, իսկ թմրամիջոցի հերթական չափաբաժնի գործածումը վերացնում կամ մեղմում է զրկանքի համախտանիշը՝ միաժամանակ առաջացնելով տրամադրության ֆոնի բարձրացում, հաճախ նաև աշխատունակության բարձրացում (երբեմն՝ թվացյալ): Միևնույն ժամանակ, հարցման մասնակիցների մեծամասնությունը համաձայն չէ, որ թմրամիջոցներն անհրաժեշտ են կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու, սուր զգացողություններ ունենալու համար (59,74 տոկոս), ինչպես նաև համաձայն չէ, որ թմրամիջոցների գործածումից առաջացող «ֆանտաստիկ» ապրումներն ու «երազները» խթանում են հոգեկան գործունեությունը և «լցնում» հոգեկան «դատարկությունը» (56,25 տոկոս):

Թմրամիջոցների օգտագործման ախտաբանական դրդապատճառներ

Զրկանքի (աբստինենտային, ժուժկալման) դրդապատճառներ

Հարցման արդյունքում թմրամիջոցների գործածման ախտաբանական դրդապատճառների խիստ տարածվածության բացահայտումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցման մասնակիցների հիմնական մասն ունեն թմրամիջոցների գործածման երկարատև փորձ, և հավանաբար հարցման մասնակիցների հիմնական մասը, նախքան դատապարտվելն ու ազատազրկման վայրում պատժի կրումը, կանոնավոր կերպով կամ մշտապես գործածել են թմրամիջոցներ: Կարելի է նաև ենթադրել, որ նրանց մի մասի մոտ առկա է թմրամիջոցներից կախվածություն: Դրա մասին են վկայում զրկանքի համախտանիշի և թմրամիջոցներից կախվածության առկայությանը վերաբերվող դրդապատճառներն արտացոլող պնդումների վերաբերյալ պատասխանները: Թմրամիջոցներից կախվածության (թմրամոլության) առաջացումն առաջին հերթին բնորոշվում է հենց զրկանքի (ժուժկալման, աբստինենտային) համախտանիշի և թմրամիջոցների նկատմամբ հիվանդագին հակման զարգացմամբ, ինչպես նաև գործածվող թմրամիջոցների նկատմամբ տոլերանտության[17] բարձրացմամբ, ինչն արտացոլված է զրկանքի և կախվածության դրդապատճառների վերաբերյալ պնդումներում: Հարցման մասնակիցների գերակշիռ մասի (82,8 տոկոս) կարծիքով՝ «նորմալ» զգալու համար անհրաժեշտ է գործածել որոշակի քանակով թմրամիջոց: Նաև, հարցման մասնակիցների գերակշիռ մասի (93,59 տոկոս) պնդմամբ՝ թմրամիջոցի հերթական չափաբաժնի բացակայությունն առաջ է բերում «ներքին լարվածություն» և «տագնապային վիճակ», իսկ հարցման մասնակիցների 77,48 տոկոսի կարծիքով՝ թմրամիջոցի

[17] «Տոլերանտություն» նշանակում է հանդուրժողականություն: «Տոլերանտություն» եզրույթը դեղաբանությունում և թմրաբանությունում նշանակում է թմրամիջոցի կամ այլ հոգեներգերծուն նյութի բազմակի ընդունման արդյունքում դրա նկատմամբ օրգանիզմի ռեակցիայի (արձագանքի) նվազումը, ինչի արդյունքում նախկին ազդեցությունը ստանալու նպատակով, հարկ է լինում շարունակաբար ավելացնել ընդունվող նյութի չափաբաժինները:

ավելացվող հերթական չափաբաժնի ընդունումն առաջացնում է հաճույքի և երանության նոր, ավելի ուժեղ զգացողություններ:

Արդյունքների այսպիսի պատկերը վառ վկայությունն է այն փաստի, որ հարցմանը մասնակցած անձինք ունեն թմրամիջոցների գործածման փորձ:

Կախվածությամբ պայմանավորված դրդապատճառներ

Կախվածությամբ պայմանավորված դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխանների արդյունքների վերլուծությունից էլ կարելի է եզրակացնել, որ հարցման մասնակիցների հիմնական մասը գիտակցում է թմրամիջոցների գործածման վնասակար հետևանքները և քննադատական վերաբերմունք դրսևորում թմրամիջոցների գործածումից առաջացող առողջական, սոցիալական և իրավական բացասական հետևանքների նկատմամբ: Այսպես, հարցման մասնակիցների 63,69 տոկոսը չեն համաձայնվել այն պնդման հետ, որ թմրամիջոցների մասին մտքերից ազատվելու համար, ավելի լավ է դրանք օգտագործել:

Ինքնավնասման դրդապատճառներ

Ախտաբանական դրդապատճառների խմբի վերջին ենթախմբի՝ ինքնավնասման դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թմրամիջոցներ գործածելու ա՛յս ենթախմբի դրդապատճառներն իրենց տարածվածությամբ կազմում են բավականին փոքր մաս: Այսինքն՝ մեր հասարակությունում լայնորեն տարածված չէ մտերիմ անձանց (հարազատներին, ընտանիքի անդամներին) դիտավորյալ բացասական հույզեր պատճառելու, ինչպես նաև ապագայի նկատմամբ հավատի կորստի հետևանքով դիտավորյալ ինքնավնասում կատարելու նպատակով թմրամիջոցների գործածումը:

Ընդհանուր պատկերը և այլ բացահայտումներ

Հարցման մասնակիցների կողմից նախկինում թմրամիջոցների գործածման փորձի ու նրանց որոշ մասի մոտ թմրամիջոցներից կախվածության հավանական փաստի պատճառով հարցման արդյունքներից բացառելով զրկանքի (ժուժկալման, աբստինենտային) և կախվածությամբ պայմանավորված դրդապատճառների վերաբերյալ պնդումների պատասխանները՝ հնարավոր է օբյեկտիվ և հստակ պատկերացում կազմել բնակչության շրջանում թմրամիջոցներ գործածելու իրական պատճառների և դրանց տարածվածության վերաբերյալ:

Գծապատկեր 2. Յուրաքանչյուր դրդապատճառին վերաբերվող հինգական պնդումների հետ հարցման մասնակիցների համաձայնություն արտահայտող պատասխանների (կարծիքների) ընդհանուր գրաֆիկական պատկերը:



Գծապատկեր 3. Յուրաքանչյուր դրդապատճառին վերաբերվող հինգական պնդումների հետ հարցման մասնակիցների <u>անհամաձայնություն արտահայտող</u> պատասխանների (կարծիքների) ընդհանուր գրաֆիկական պատկերը:



Հետազոտության արդյունքների ընդհանուր պատկերից և բոլոր դրդապատճառների վերաբերյալ պատասխանների համադրությունից պարզորոշ երևում է թմրամիջոց գործածելու բոլոր դրդապատճառների տարածվածությունը:

Թմրամիջոցների գործածման ամենանվազ դիտվող պատճառներն են թմրամիջոցների գործածման ավանդույթային, սուբմիսիվ և ինքնավնասման ենթախմբերի դրդապատճառները: Այստեղ հարկ է առանձնահատուկ նշել, որ յուրաքանչյուր դրդապատճառին վերաբերվող հինգական պնդումներում (հարցերում) տեղ էին գտել ինչպես հիմնականում ուղղակիորեն (անմիջականորեն) դրդապատճառներին վերաբերվող և դրանց տարածվածությունը բացահայտող, այնպես էլ կոնկրետ դրդապատճառի հետ առնչություն ունեցող, սակայն, միևնույն ժամանակ, թմրամիջոցների գործածման

փորձ ունեցող անձանց այլ հատկանիշներ և մոտեցումներ բացահայտող պնդումներ (հարցեր):

Այսպես, ավանդույթային դրդապատճառների ենթախմբի 1-ին (հարցաթերթիկի 1-ին) պնդումը (հարցը) վերաբերվում է թմրամիջոցների գործածման համար դրամական միջոցների պարտադիր առկայության անհրաժեշտությանը: Համաձայն պնդման վերաբերյալ պատասխանների՝ հարցման մասնակիցների գրեթե կեսի (49,04 տոկոս) կարծիքով թմրամիջոցների գործածման համար դրամական միջոցների առկայությունը պարտադիր պայման չի հանդիսանում[18]: Այս պնդման՝ ավանդույթային դրդապատճառների ենթախմբում տեղադրելու պատճառն այն է, որ այն երկրներում և տարածաշրջաններում, որտեղ տարածված է թմրամիջոցների կամ այլ հոգեներգործուն նյութերի ավանդույթային, սովորույթային գործածումը, թմրամիջոցների պատրաստման համար հումք հանդիսացող բույսերը բնակիչների կողմից սովորաբար աճեցվում են տնային (տնամերձ) պայմաններում: Եվ այս պատճառով թմրամիջոցներ հայթայթելու, ձեռք բերելու, պատրաստելու համար հիմնականում դրամական միջոցների անհրաժեշտություն չի լինում (օրինակ՝ «Ոսկե կիսալուսնի», «Ոսկե եռանկյունու» երկրներ, Կոլումբիա, Վենեսուելա, Էկվադոր):

«Կեղծ-մշակույթային» դրդապատճառների ենթախմբի 1-ին (հարցաթերթիկի 3-րդ պնդում) պնդումը վերաբերվում է թմրամիջոցների գործածման նեղ անձնական հարց լինելու հանգամանքին և յուրաքանչյուր մարդու՝ թմրամիջոց գործածելու կամ թմրամիջոցներից զերծ մնալու ընտրության իրավունքին: Պնդման վերաբերյալ պատասխաններից պարզ է դառնում, որ հարցման մասնակիցների գերակշիռ մասը (81,53 տոկոս) համաձայն են, որ թմրամիջոցների գործածումը նեղ անձնական հարց է, հետևաբար յուրաքանչյուր մարդու ընտրությունն է՝ գործածե՞լ թմրամիջոցներ, թե՞ զերծ մնալ դրանցից: Այսինքն՝ հարցման մասնակիցների հիմնական մասի կարծիքով՝ անձանց որևէ խմբի կողմից (այդ թվում՝

[18] Այս մասին առավել մանրամասն նկարագրված է էջ 11-ում:

ենթամշակույթների ներկայացուցիչների կողմից) «թմրամոլային» արժեհամակարգերը և թմրամիջոցների գործածմամբ դրսևորվող կենսակերպն ու վարքային «կանոնները» չպետք է քարոզվեն կամ պարտադրվեն ենթամշակույթների «հետնորդներին» ու «երկրպագուներին»: Այս փաստը լավագույն կերպով արտացոլում է թմրամիջոց գործածող անձանց վերաբերմունքը «թմրամոլային» կենսակերպ և վարքային կանոններ քարոզող, թելադրող, երբեմն նաև պարտադրող ենթամշակույթների նկատմամբ, ինչի մասին վկայում են նաև «կեղծ-մշակույթային» դրդապատճառների ենթախմբի մյուս չորս պնդումների վերաբերյալ պատասխանների արդյունքները:

«Կեղծ-մշակույթային» դրդապատճառների ենթախմբի մեկ այլ՝ 2-րդ (հարցաթերթիկի 12-րդ պնդում) «ի համեմատ ծխախոտի և ալկոհոլի, թմրամիջոցների՝ առավել վնասակար և վտանգավոր լինելու» վերաբերյալ պնդման պատասխանների արդյունքներից (այն է՝ հարցման մասնակիցների գերակշիռ մասը (78,85 տոկոս) պնդում են կախվածություն առաջացնող այլ նյութերի, մասնավորապես՝ ծխախոտի և ալկոհոլի համեմատությամբ թմրամիջոցների առավել վնասակար լինելու հանգամանքը) պարզ է դառնում թմրամիջոց գործածող անձանց քննադատական և գիտակցված վերաբերմունքն ու տեսակետը հասարակության որոշ խմբերի (այդ թվում՝ ենթամշակույթների) կողմից քարոզվող այն մոտեցմանը, թե իբր թմրամիջոցների գործածումն առավել վտանգավոր հետևանքներ չի ունենում, քան, օրինակ, ալկոհոլի կամ ծխախոտի գործածումը: Միևնույն ժամանակ, այս պնդման պատասխանների արդյունքներն անմիջականորեն արտացոլում են հարցման մասնակիցների հիմնական մասի կողմից թմրամիջոցների գործածման վնասակար (կործանարար) հետևանքների նկատմամբ քննադատական և գիտակցված վերաբերմունքի առկայության փաստը:

Թմրամիջոցների գործածման վտանգավոր, վնասակար և կործանարար հետևանքների նկատմամբ քննադատական և գիտակցված վերաբերմունքի մասին են վկայում նաև «կեղծ-մշակույթային» դրդապատճառների ենթախմբի 3-րդ (հարցաթերթիկի 21-րդ պնդում) պնդման վերաբերյալ հարցման մասնակիցների

պատասխանները, ինչից պարզ է դառնում հարցման մասնակիցների մեծամասնության (61,75 տոկոս) այն տեսակետը, որ թմրամիջոցների գործածումն առաջացնում է կախվածություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թմրամիջոցներ գործածելու հիմնական շարժառիթներ են հանդիսանում անձնական և անհատական խնդիրների, պահանջների հետևանքով թմրամիջոցներ գործածելու դրդապատճառները (շարժառիթները)՝ հաճույքապաշտական (հեդոնիստական), ատարակտիկ, ինչպես նաև վարքային դրսևորումները գերակտիվացնելու մղումները:

2. Արդեն իսկ թմրամիջոցներ գործածելու փորձ ունեցող անձանց համար թմրամիջոցների մշտական գործածման պատճառները հիմնականում նրանց մոտ առաջացող թմրամիջոցներից կախվածության համախտանիշի (թմրամոլությանը) զարգացմանը բնորոշ ախտանիշներն ու համախտանիշներն են՝ թմրամիջոցից կախվածության համախտանիշը, թմրամիջոցի նկատմամբ հիվանդագին «անհաղթահարելի» (կոմպուլսիվ) հակումը, զրկանքի (աբստինենտային, ժուժկալման) համախտանիշը, ինչպես նաև թմրամիջոցի նկատմամբ տոլերանտության («հանդուրժողականության») շարունակական բարձրացումն ու դրա հետևանքով գործածվող թմրամիջոցի ընդունվող չափաբաժինների շարունակական ավելացումը:

3. Թմրամիջոցներ գործածելու սոցիալ-հոգեբանական դրդապատճառները՝ «շրջապատի», ընկերական խմբերի ազդեցությամբ թմրամիջոցների գործածումը, «հեղինակություն» երևալու (դառնալու) նպատակով թմրամիջոցների գործածումը, թմրամիջոցների ավանդույթային և սովորույթային գործածումը, «կեղծ-մշակույթային» արժեհամակարգերի ազդեցությամբ թմրամիջոցների գործածումը, իրենց տարածվածությամբ զիջում են անձնական խնդիրների և պահանջների հետևանքով թմրամիջոցներ գործածելու դրդապատճառներին:

4. Ախտաբանական դրդապատճառ համարվող թմրամիջոցների գործածմամբ ապագայի նկատմամբ հավատի և սթափ կյանք վարելու իմաստի կորստի պատճառով դիտավորյալ

ինքնավնասում կատարելու, ինչպես նաև հարազատներին կամ ընտանիքի անդամներին դիտավորյալ բացասական հույզեր պատճառելու նպատակով թմրամիջոցների գործածման պատճառները հաճախ չեն հանդիպում:

5. Հարցմանը մասնակցած թմրամիջոցներ գործածող անձանց գրեթե կեսը դրամական միջոցների առկայությունը թմրամիջոցներ գործածելու պարտադիր պայման չի համարում, ինչից կարելի է եզրակացնել, որ թմրամիջոցներ գործածող անձանց համար թմրամիջոցները մատչելի են՝ հավանաբար ի հաշիվ ներկայումս բոլորին հասանելի մի շարք դեղերից քիմիական լուծիչների միջոցով տնայնագործական պայմաններում պատրաստվող էժանագին և առողջության համար խիստ վտանգավոր թմրամիջոցի՝ դեզոմորֆինի[19], ինչպես նաև՝ այսպես կոչված «թեթև թմրամիջոցների» (օրինակ՝ կաննաբինոիդների խմբի), որոնք վայրի պայմաններում աճում են հանրապետության որոշ մարզերում:

6. Թմրամիջոցներ գործածող անձանց հիմնական մասը գիտակցում է թմրամիջոցների գործածման կործանարար հետևանքները՝ համարելով, որ թմրամիջոցների գործածումն ավելի վնասաբեր է, քան ալկոհոլի կամ ծխախոտի գործածումը: Սակայն, այս պնդումը հիմք չի տալիս եզրակացնել, որ թմրամիջոցների գործածումից առաջացող վնասների մասին մասնակիցները իրազեկված են եղել նախքան թմրամիջոցների գործածումն սկսելը: Ենթադրելի է, որ հարցման մասնակիցների մոտ թմրամիջոցների գործածման կործանարար և վտանգավոր հետևանքների նկատմամբ քննադատական վերաբերմունքն ու թմրամիջոցների առաջացրած առողջական, սոցիալական և իրավական խնդիրների, բարդությունների գիտակցումն արտահայտող տեսակետը ձևավորվել է թմրամիջոցների գործածումն սկսելուց, ապա դրանց

[19]Քիմիական բանաձևը՝ $C_{17}H_{21}NO_2$: Արհեստական ճանապարհով սինթեզվող ափիոնային խմբի թմրամիջոց (ափիոնատիպ նյութ, օփիոիդ), որը գերազանցում է մորֆինին իր հակացավային ազդեցության արագահասությամբ և ուժգնությամբ: Դեզոմորֆինն առաջին անգամ սինթեզվել է ԱՄՆ-ում 20-րդ դարի սկզբներին, սակայն իր կարճատև ազդեցության և ծանր կախվածություն առաջացնելու հատկությունների պատճառով բժշկության մեջ գործնական կիրառություն չի ստացել:

սեփական առոջության, իրենց և իրենց ընտանիքների սոցիալական վիճակի վրա ունեցած բացասական ազդեցության, ինչպես նաև անօրինական գործողությունների կատարելու պատճառով իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվելուց հետո միայն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հարցաթերթիկ

1. Թմրամիջոցներ օգտագործում են միայն այն ժամանակ, երբ դրանք մատչելի են, և կան բավարար դրամական միջոցներ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

2. Թմրամիջոցներ սկսում են փորձել, որպեսզի հասկանալի դառնա թմրամիջոց գործածող այլ անձանց զգացողություններն ու ապրումները:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

3. Թմրամիջոցների օգտագործումը խիստ նեղ անձնական հարց է, հետևաբար յուրաքանչյուր մարդու ընտրությունն է գործածե՞լ թմրամիջոցներ, թե՞ ոչ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

4. Թմրամիջոցներն առաջացնում են հոգեկան և ֆիզիկական հաճույք՝ էյֆորիա, հաճելի և երանելի զգացողություններ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

5. Թմրամիջոցները վերացնում են ներքին լարվածությունը, տագնապը, վախը, անհանգստությունը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

6. Թմրամիջոցների օգտագործումը թույլ է տալիս դուրս գալ ծանծրալի վիճակից, դատարկության զգացումից, մոռանալ միայնությունը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

7. «Նորմալ» զգալու համար անհրաժեշտ է օգտագործել որոշակի քանակությամբ թմրամիջոց:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

8. Թմրամիջոցների մասին մտքերից ազատվելու համար, ավելի լավ է դրանք օգտագործել:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

9. Թմրամիջոցներն օգտագործում են այլոց բացասական հույզեր պատճառելու համար, շրջապատին (ընտանիքի անդամներին, ընկերներին) տխրություն և ցավ պատճառելու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

10. Թմրամիջոցներ կարելի է երբեմն օգտագործել, օրինակ՝ տոնական և հանգստյան օրերին՝ ուրախանալու և ժամանակն ավելի հաճելի անցկացնելու համար:

Այո՛	Ավելի շուտ,	Չգիտեմ	Ավելի շուտ,	Ո՛չ

	այո՛		ո՛չ	
□	□	□	□	□

11. Ընկերական շրջապատում թմրամիջոցներ են գործածում՝ հրաժարվելու հետևանքով ընկերների հետ փոխհարաբերությունները չվնասելու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

12. Թմրամիջոցներն ավելի վտանգավոր չեն, քան ծխախոտն ու ալկոհոլը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

13. Թմրամիջոցներն օգտագործում են հետաքրքրասիրությունից դրդված՝ նոր ու անծանոթ զգացողություններ և ապրումներ ունենալու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

14. Թմրամիջոցների օգտագործումը հնարավորություն է տալիս կտրվել իրականությունից և առօրյա հոգսերից:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

15. Թմրամիջոցներն անհրաժեշտ են՝ առկա հոգեբանական վիճակը փոփոխելու, կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու և սուր զգացողություններ ստանալու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

16. Թմրամիջոցի օգտագործումը նպաստում է զրկանքի (աբստինենցիա, «լոմկա») հաղթահարմանը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

17. Թմրամիջոցներն օգտագործում են, քանի որ գիտակցում են՝ առկա է կախվածություն թմրամիջոցից (թմրամիջոցներից):

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

18. Թմրամիջոցների օգտագործումը պայմանավորված է ապրելու իմաստի կորստով:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

19. Թմրամիջոցների օգտագործումը ընկերների հետ հանդիպման առիթով թույլ է տալիս ժամանակավորապես ազատվել ձանձրույթից և անգործությունից:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

20. Թմրամիջոցներ են օգտագործում՝ շրջապատի մոտ «թույլ մարդու» տպավորություն չգործելու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

21. Կարելի է օգտագործել թմրամիջոցներ և չհայտնվել թմրամիջոցից (թմրամիջոցներից) կախվածության ճիրաններում:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

22. Թմրամիջոցը մարդուն հնարավորություն է տալիս ունենալ երջանկության և բարօրության զգացում:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

23. Թմրամիջոցներն օգնում են մոռանալ մտերիմների հետ կոնֆլիկտները, տհաճ իրադարձությունները, տխրությունն ու հիասթափությունները:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

24. Թմրամիջոցների օգտագործումից առաջացող «երազների» և ֆանտաստիկ ապրումների աշխարհը խթանում է հոգեկան գործունեությունը, լցնում «հոգեկան դատարկությունը»:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

25. Թմրամիջոցի հերթական չափաբաժնի բացակայությունն առաջացնում է ներքին լարվածություն, տագնապային վիճակ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

26. Թմրամիջոցի չափաբաժիններն աստիճանաբար ավելացնում են, որովհետև հնարավոր չէ դիմակայել դրա ընդունումից հետո առաջացող հաճելի և երանելի զգացողության նկատմամբ հակմանը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

27. Թմրամիջոցներն օգտագործում են «հասարակությունում արմատավորված կարծրատիպերին հակառակ» ապրող մարդու ոգի և կամք ցույց տալու համար՝ խուսափելով լինել օրինակելի և ճիշտ՝ այնպիսին, ինչպիսին բոլորն են:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

28. Թմրամիջոցների օգտագործումը թույլ է տալիս տարբերվել մարդկանց ընդհանուր զանգվածից և դարձնում է մարդուն «հեղինակություն»:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

29. Թմրամիջոցներն օգտագործում են ընկերական խմբում «բարդույթավորվածի» տպավորություն չգործելու և «սպիտակ ագռավ» չլինելու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

30. Թմրամիջոցների օգտագործումը հանդիսանում է ինքնադրսևորման միջոց:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

31. Թմրամիջոցների օգտագործումը նպաստում է հաճելի և ուրախ ժամանցին, նպաստում է մարդկանց հետ ազատորեն շփմանը:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

32. Անձնական կյանքի կարգավորման հնարավորությունների բացակայությունն են հանդիսանում թմրամիջոցների գործածման պատճառ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

33. Թմրամիջոցներն ուժ և էներգիա են հաղորդում, բարձրացնում մարդու աշխատունակությունը և լավագույնս ծառայում՝ որպես «դոպինգ» (խթանիչ):

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

34. Թմրամիջոց օգտագործելուց հետո մարդու տրամադրությունը բարձրանում է, իսկ աշխատունակությունը վերականգնվում:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

35. Թմրամիջոցի չափաբաժնի մատչելի լինելը, ապա նաև դրա առկայությունն առաջացնում են այն անմիջապես ընդունելու ցանկություն կամ պահանջ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

36. Շրջապատող մարդկանց կողմից հասկացված և ընդունված չլինելը, սեփական ունակությունների և հնարավորությունների նկատմամբ հավատի կորուստն են ստիպում մարդուն օգտագործել թմրամիջոցներ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

37. Թմրամիջոցների օգտագործումը քիչ թվով անձանց է հասանելի, և թմրամիջոց գործածողը շրջապատի աչքերում «հեղինակություն» է երևում:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

38. Թմրամիջոցներ օգտագործում են ընկերական խմբի ճնշման և ազդեցության հետևանքով:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
☐	☐	☐	☐	☐

39. Թմրամիջոցների օգտագործումը ժամանակակից է:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ

□	□	□	□	□

40. Թմրամիջոցների օգտագործման առաջին փորձը պատճառ է դառնում՝ այն մշտապես գործածելու համար:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

41. Թմրամիջոցների օգտագործումը վերացնում է բացասական ապրումները՝ դրամական միջոցների պակասի, միջանձնային փոխհարաբերությունների և այլ պատճառների հետ կապված:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

42. Թմրամիջոցների օգտագործումը թույլ է տալիս մարդուն զգալ իրեն ուժեղ և ազատ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

43. Թմրամիջոցի բարձրացվող հերթական չափաբաժնի ընդունումն առաջացնում է հաճույքի և երանության նոր, ավելի ուժեղ զգացողություններ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
□	□	□	□	□

44. Թմրամիջոցի նկատմամբ մարդու կողմից կարող է առաջանալ «սիրո» զգացումին որոշ չափով նմանվող զգացում, և մարդը կարող է անընդհատ «ձգտել ու կարոտել նրան», ապա և ուրախանալ՝ վայելելով «նրա հետ հանդիպումը»:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
◻	◻	◻	◻	◻

45. Ապագայի հեռանկարի նկատմամբ հավատի կորուստը, կյանքի իմաստի և կյանքի արժեքի կորուստն են ստիպում մարդուն օգտագործել թմրամիջոցներ:

Այո՛	Ավելի շուտ, այո՛	Չգիտեմ	Ավելի շուտ, ո՛չ	Ո՛չ
◻	◻	◻	◻	◻

Ամսաթիվ՝ ____/____ / 2014թ.

Հարցման վայրը՝ «_____» ՔԿՀ

Հավելված 2. Հարցման արդյունքներ

Թմրամիջոցների գործածման սոցիալ-հոգեբանական դրդապատճառներ

1. «Ավանդույթային» դրդապատճառներ

1) Հարցման արդյունքում պարզվել է, որ թմրամիջոց գործածողների 49,04 տոկոսի համար թմրամիջոցների մատչելիությունն ու դրանք հայթայթելու համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը պարտադիր պայման չէ թմրամիջոցներ գործածելու համար: 48,41 տոկոսը պատասխանել է, որ թմրամիջոցների մատչելի լինելը և դրամական միջոցների առկայությունը պարտադիր պայման են: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 2,55 տոկոսը:
2) Հարցվողների 15,29 տոկոսը կարծում է, որ թմրամիջոցներ կարելի է գործածել տոնական և հանգստյան օրերին ուրախանալու և հաճելի ժամանակ անցկացնելու նպատակով: 74,52 տոկոսը պատասխանել է, որ՝ «չի կարելի»: 10,19 տոկոսը հարցին դժվարացել է պատասխանել:
3) Հարցվողների 21,57 տոկոսը պատասխանել է, որ թմրամիջոցների օգտագործումն ընկերների հետ հանդիպման առիթով թույլ է տալիս ժամանակավորապես ազատվել ձանձրույթից և անգործությունից: 74,52 տոկոսը կարծում է, որ ընկերների հետ հանդիպման ժամանակ թմամիջոցների գործածումը չի բերում ձանձրույթի և անգործության վերացմանը: 9,8 տոկոսը դժվարացել է պատասխանել հարցին:
4) Հարցման մասնակիցների 88,39 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումը մարդուն դարձնում են «հեղինակություն» և մարդկանց մնացած զանգվածից «տարբերվող»: 6,45 տոկոսը համաձայնվել է վերոնշյալ պնդման հետ: 5,16 տոկոսը դժվարացել է պատասխանել հարցին:
5) Հարցվողների 65,58 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետո, որ թմրամիջոցների քիչ թվով անձանց հասանելի լինելու պատճառով թմրամիջոց գործածողը շրջապատի աչքերում «հեղինակություն» է երևում: 32,47 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 1,95 տոկոսը դժվարացել է պատասխանել:

2. Սուբմիսիվ դրդապատճառներ

1) Հարցվողների 60,9 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցներ գործածելու պատճառ է հանդիսանում թմրամիջոց գործածող այլ անձանց ապրումներն ու զգացողությունները հասկանալու նպատակը: 33,97 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 5,13 տոկոսը դժվարացել է պատասխանել:
2) Հարցվողների 76,13 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցներ օգտագործում են՝ դրանց օգտագործումից հրաժարվելու հետևանքով ընկերների հետ փոխհարաբերությունները չվնասելու նպատակով: 14,84 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 9,03 տոկոսը դժվարացել է պատասխանել:
3) Հարցվողների 71,9 տոկոսը համաձայն չեն այն պնդման հետ թմրամիջոցների օգտագործման պատճառը շրջապատի մոտ «թույլ մարդու» տպավորություն չգործելն է: 22,88 տոկոսը համաձայնվել է պնդման հետ, իսկ 5,23 տոկոսը դժվարացել է պատասխանել:
4) Հարցվողների 83,97 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածման պատճառներից է ընկերական խմբում «բարդույթավորվածի» և «սպիտակ ագռավի» պիտակավորումից խուսափելը: 10,26 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 5,77 տոկոսը դժվարացել է պատասխանել:
5) Հարցվողների 77,27 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների օգտագործման պատճառը ընկերական խմբի ճնշումն ու ազդեցությունն է: Պնդման հետ համաձայնվել է մասնակիցների 18,18 տոկոսը, իսկ 4,55 տոկոսը դժվարացել է պատասխանել:

3. «Կեղծ-մշակույթային» դրդապատճառներ

1) Հարցվողների 81,53 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումը նեղ անձնական հարց է, հետևաբար յուրաքանչյուր մարդու ընտրությունն է՝ գործածե՞լ թմրամիջոցներ, թե՞ զերծ մնալ դրանցից: 12,1 տոկոսը չի համաձայնվել այս պնդման հետ, իսկ 6,37 տոկոսը դժվարացել է պատասխանել:
2) Հարցվողների 78,85 տոկոսը համաձայնվել է այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումն ավելի վտանգավոր է, քան ծխախոտի

և ալկոհոլի գործածումը: 11,54 տոկոսը կարծում է, որ պնդումը ճիշտ չէ: Իսկ 9,62 տոկոսը դժվարացել է պատասխանել:

3) Հարցման մասնակիցների 61,75 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների օգտագործումը կարող է չառաջացնել թմրամիջոցներից կախվածություն: 28,76 տոկոսը համաձայն է այդ պնդման հետ, իսկ 8,5 տոկոսը դժվարացել է պատասխանել:

4) Հարցվողների 58,97 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումը ինքնադրսևորման միջոց է: 28,75 տոկոսը համաձայնվել է պնդման հետ, իսկ 14,74 տոկոսը դժվարացել է պատասխանել:

5) Հարցվողների 76,62 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցների գործածումը ժամանակակից երևալու միջոց է: 15,58 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 7,79 տոկոսը դժվարացել է պատասխանել:

Անձնական խնդիրների և պահանջների հետևանքով թմրամիջոցների գործածման պատճառներ

4. Հաճույքապաշտական (հեդոնիստական) դրդապատճառներ

1) Հարցվողների 71,34 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցներն առաջացնում են հոգեկան և ֆիզիոլոգիական հաճույք՝ էյֆորիա, հաճելի և երանելի զգացողություններ: 19,11 տոկոսը չի համաձայնվել պնդման հետ, իսկ 9,55 տոկոսը չի կողմնորոշվել՝ պատասխանելիս:
2) Հարցվողների 65.58 տոկոսը չի համաձայնվել այն պնդման հետ, ըստ որի թմրամիջոցներն օգտագործում են հետաքրքրասիրությունից դրդված՝ նոր ու անծանոթ զգացողություններ և ապրումներ ունենալու համար: 32,47 տոկոսը համաձայն է այդ պնդման հետ, իսկ 1,95 տոկոսը դժվարացել է պատասխանել:
3) Հարցվողների 49,01 տոկոսը բացասական պատասխան է տվել այն պնդմանը, թե թմրամիջոցը մարդուն հնարավորություն է տալիս ունենալ երջանկության և բարօրության զգացողություն, մինչդեռ 39,74 տոկոսը համաձայնվել է պնդման հետ, իսկ 11,26 տոկոսը դժվարացել է պատասխանել:
4) Հարցվողների 50,32 տոկոսը գտնում է, որ ճիշտ չէ պնդումն այն մասին, թե թմրամիջոցների օգտագործումը նպաստում է հաճելի և ուրախ ժամանցին, ինչպես նաև մարդկանց հետ ազատորեն շփմանը: Հարցվողների 46,45 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 3.23 տոկոսը դժվարացել է պատասխանել:
5) Հարցվողների 70,78 տոկոսը համաձայն է, որ թմրամիջոցների օգտագործման առաջին փորձը պատճառ է դառնում այն մշտապես օգտագործելու համար: 20,13 տոկոսը չի համաձայնվել, իսկ 9,09 տոկոսը դժվարացել է պատասխանել:

5. Ատարակտիկ դրդապատճառներ

1) Հարցվողների 53,50 տոկոսը ճիշտ է համարում այն պնդումը, որ թմրամիջոցները վերացնում են ներքին լարվածությունը, տագնապը, վախն ու անհանգստությունը: 38,85 տոկոսը չի համաձայնվել պնդման հետ, իսկ 7,64 տոկոսը դժվարացել է պատասխանելիս:

2) Հարցվողների 56,49 տոկոսը բացասական պատասխան է տվել այն պնդմանը, որ թմրամիջոցների օգտագործումը հնարավորություն է տալիս կտրվել իրականությունից և առօրյա հոգսերից: 36,36 տոկոսը դրական է պատասխանել, իսկ 7,14-ը դժվարացել է պատասխանել:

3) Հարցվողների 65,13 տոկոսը համաձայն չէ, որ թմրամիջոցներն օգնում են մոռանալ մտերիմների հետ կոնֆլիկտները, տհաճ իրադարձությունները, տխրությունն ու հիասթափությունները: 26,97 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 7,89 տոկոսը դժվարացել է պատասխանել:

4) Հարցվողների 69,06 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, ըստ որի անձնական կյանքի կարգավորման հնարավորությունների բացակայությունն է հանդիսանում թմրամիջոցների գործածման պատճառ: 25,81 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 5,16 տոկոսը դժվարացել է պատասխանել:

5) Հարցվողների 61,69 տոկոսը համաձայնվել է այն պնդման հետ, ըստ որի թմրամիջոցների օգտագործումը վերացնում է բացասական հուզական ապրումները՝ դրամական միջոցների պակասի, միջանձնային փոխհարաբերությունների և այլ խնդիրների հետ կապված: 31,82 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 6.49 տոկոսը դժվարացել է պատասխանել:

6. Վարքային դրսևորումների գերակտիվացմանն ուղղված դրդապատճառներ

1) Հարցվողների 48,41 տոկոսը համաձայն չէ այն պնդմանը, որ թմրամիջոցների օգտագործումը թույլ է տալիս դուրս գալ ձանձրալի վիճակից, դատարկության զգացումից, մոռանալ միայնությունը: 43,31 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 8,28 տոկոսը դժվարացել է պատասխանել:
2) Հարցման մասնակիցների 59,74 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցներն անհրաժեշտ են առկա հոգեբանական վիճակը փոխելու, կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու և սուր զգացողություններ ստանալու համար: 35,71 տոկոսը համաձայնվել է այս պնդման հետ, իսկ 4,55 տոկոսը դժվարացել է պատասխանել:
3) Հարցվողների 56,25 տոկոսը բացասական պատասխան է տվել պնդմանը, ըստ որի թմրամիջոցների օգտագործումից առաջացող «երազների» և ֆանտաստիկ ապրումների աշխարհը խթանում է հոգեկան գործունեությունը, լցնում հոգեկան դատարկությունը: 29,41 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 14,38 տոկոսը չի կողմնորոշվել պատասխանելիս:
4) Հարցվողների 72,90 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցներն «ուժ ու էներգիա» են հաղորդում, «բարձրացնում» մարդու աշխատունակությունը և լավագույն կերպով ծառայում որպես «դոպինգ» («խթանիչ»): 15,48 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 11,61 տոկոսը դժվարացել է պատասխանել:
5) Հարցվողների 54,55 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցների օգտագործումը թույլ է տալիս մարդուն զգալ իրեն ուժեղ և ազատ: 35,06 տոկոս հարցվողները համաձայն չէ պնդման հետ, իսկ 10,39 տոկոսը դժվարացել է պատասխանել:

Թմրամիջոցների գործածման ախտաբանական պատճառներ

7. Զրկանքի (աբստինենտային) դրդապատճառներ

1) Հարցվողների 82,8 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ «նորմալ» զգալու համար անհրաժեշտ է օգտագործել որոշակի քանակությամբ թմրամիջոց: 14,65 տոկոսը չի համաձայնվել պնդման հետ, իսկ 2.55 տոկոսը դժվարացել է պատասխանել:
2) Հարցվողների 54,55 տոկոսը հաստատել է այն պնդումը, որ թմրամիջոցի օգտագործումը նպաստում է զրկանքի հաղթահարմանը: 37,66 տոկոսը բացասական է պատասխանել պնդմանը, իսկ 7,79 տոկոսը չի կողմնորոշվել՝ պատասխանելիս:
3) Հարցվողների 93,59 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցի հերթական չափաբաժնի բացակայությունն առաջացնում է ներքին լարվածություն, տագնապային վիճակ: 3,85 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 2,65 տոկոսը դժվարացել է պատասխանել:
4) Հարցվողների 74,68 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, ըստ որի թմրամիջոց օգտագործելուց հետո մարդու տրամադրությունը բարձրանում է: 13,64 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 11,69 տոկոսը դժվարացել է պատասխանել:
5) Հարցման մասնակիցների 77,48 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցի ավելացվող հերթական չափաբաժնի ընդունումն առաջացնում է հաճույքի և երանության նոր, ավելի ուժեղ զգացողություններ: 15,89 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 6,63 տոկոսը դժվարացել է պատասխանել:

8. Կախվածությամբ պայմանավորված դրդապատճառներ

1) Հարցվողների 63,69 տոկոսը չի համաձայնվել, որ թմրամիջոցների մասին մտքերից ազատվելու համար, ավելի լավ է դրանք օգտագործել: 31,21 տոկոսը համաձայնվել է պնդման հետ, իսկ 5,1 տոկոսը չի կողմնորոշվել պատասխանելիս:
2) Հարցվողների 49,02 տոկոսը համաձայն չէ, որ թմրամիջոցներն օգտագործում են քանի, որ գիտակցում են առկա կախվածությունը:

41,83 տոկոսը համաձայն է այդ պնդման հետ, իսկ 9,15 տոկոսը դժվարանում է պատասխանել:

3) Հարցվողների 63,46 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, ըստ որի թմրամիջոցի չափաբաժիներն աստիճանաբար ավելացնում են, քանի որ հնարավոր չէ դիմակայել դրա ընդունումից հետո առաջացող հաճելի և երանելի զգացողության նկատմամբ հակմանը: 21,79 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 14,74-ը՝ դժվարացել է պատասխանել:

4) Հարցվողների 55,48 տոկոսը համաձայն է այն պնդման հետ, որ թմրամիջոցի չափաբաժնի մատչելի լինելը, ապա նաև դրա առկայությունն առաջացնում են այն անմիջապես ընդունելու ցանկություն կամ պահանջ: 32,26 տոկոսը համաձայն չէ պնդման հետ, իսկ 12,26 տոկոսը դժվարացել է պատասխանել:

5) Հարցվողների 50,99 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ թմրամիջոցի նկատմամբ մարդու կողմից կարող է առաջանալ «սիրո» զգացումին նմանվող զգացում, և մարդը կարող է անընդհատ «ձգտել ու կարոտել նրան», ապա և ուրախանալ՝ վայելելով «նրա հետ հանդիպումը»: 23,14 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 25,14 տոկոսը դժվարացել է պատասխանել:

9. Ինքնավնասման դրդապատճառներ

1) Հարցվողների 83,97 տոկոսը համաձայն չէ պնդմանը, որ թմրամիջոցներն օգտագործում են այլ անձանց բացասական հույզեր պատճառելու համար, շրջապատին (ընտանիքի անդամներին, ընկերներին) տխրություն և ցավ պատճառելու համար: 7,62 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 6,41 տոկոսը դժվարացել է պատասխանել:
2) Հարցվողների 68,83 տոկոսը համաձայն չէ, որ թմրամիջոցների օգտագործումը պայմանավորված է ապրելու իմաստի կորստով: Մինչդեռ, 22,08 տոկոսը համաձայն է այս պնդման հետ, իսկ 9,09 տոկոսը դժվարացել է պատասխանել:
3) Հարցման մասնակիցների 67,74 տոկոս չի համաձայնվել այն պնդման հետ, որ թմրամիջոցներն օգտագործում են «հասարակությունում արմատավորված կարծրատիպերին հակառակ» ապրող մարդու ոգի և կամք ցույց տալու համար՝ խուսափելով լինել օրինակելի և ճիշտ այնպիսին, ինչպիսին բոլորն են: 20 տոկոսը դժվարացել է պատասխանել, իսկ 12,26 տոկոսը համաձայն է պնդման հետ:
4) Հարցման մասնակիցների 70,59 տոկոսը համաձայն չէ այն պնդման հետ, որ շրջապատող մարդկանց կողմից հասկացված և ընդունված չլինելը, սեփական ունակությունների և հնարավորությունների նկատմամբ հավատի կորուստն են ստիպում մարդուն օգտագործել թմրամիջոցներ: 15,69 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 13,73 տոկոսը դժվարացել է պատասխանել:
5) Հարցվողների 53,33 տոկոսը համաձայն չէ, որ ապագայի հեռանկարի նկատմամբ հավատի կորուստը, կյանքի իմաստի և կյանքի արժեքի կորուստն են ստիպում մարդուն օգտագործել թմրամիջոցներ: 41,33 տոկոսը համաձայն է պնդման հետ, իսկ 5,33 տոկոսը դժվարացել է պատասասխանել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Методика изучения мотивов употребления наркотиков», И.В. Аксючиц, Психологический журнал 2007 №1 (13) с. 52-59
2. European Monitoring Centre for Drugs and Drug Addiction «European Drug Report», 2014
3. European Monitoring Centre for Drugs and Drug Addiction «European Drug Report», 2013
4. United Nations Office on Drugs and Crime, «World Drug Report», 2014
5. United Nations Office on Drugs and Crime, «World Drug Report», 2013
6. «Հայաստանում թմրամիջոցներ ներարկվող մարդկանց աշխարհագրական բաշխվածության, նրանց հետ աշխատող հասարակական կազմակերպությունների մատչելիության և ասեղների ու ներարկիչների ծրագրերի ընդլայնման հնարավորությունների գնահատման հետազոտության զեկույց», Ա. Պոտոսյան, Դ. Դավթյան, Ս. Նազինյան (Երևան, 2013թ.)
7. Թմրամիջոցների վերաբերյալ 2013 թվականի ազգային զեկույց (Երևան, 2013)

Երևան - 2014